ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Լոռի Բերդ համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Լոռի Բերդ	Ավագանու հերթական նիստ	13.09.2022թ.	11:00	**Լոռի Բերդ համայնքապետարան** (գ.Լոռի Բերդ, Աշոտ Երկաթ փողոց, շենք 7)

ՆԱԽԱԳԻԾ 1

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2022Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ
13-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Ձեկ. *ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022թ. սեպտեմբերի 13-ի նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու
2022թ. սեպտեմբերի 13-ի № -Ա որոշման

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Լոռի Բերդ համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 13-ի նիստի օրակարգի հաստատում:
2) Լոռի Բերդ համայնքի 2022 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու մասին
3) Լոռի Բերդ համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը հաստատելու մասին
4) Լոռի Բերդ համայնքի վարչական տարածքում գտնվող, քաղաքացու սեփականություն հանդիսացող հողամասերի նպատակային նշանակության փոփոխման մասին
5) «Ուռուտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ին գույք նվիրաբերելու մասին

ՆԱԽԱԳԻԾ 2

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ.
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

/Հեկ. *ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ ենթակետով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և 83-րդ հոդվածի 2-րդ կետով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Կատարել Լոռի Բերդ համայնքի 2022 թվականի բյուջեում հետևյալ փոփոխությունները համաձայն 1-ից 5 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 3

**ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ.
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

/Ձեկ. *ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5-րդ կետերով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքում 25.05.2022թ. փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-133-Ն 4-րդ հոդվածի 2-րդ մասով՝

համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Լոռի Բերդ համայնքի 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 4

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ , ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

/Հեկ. *ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼԻՔՋԱՆՅԱՆ*

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները կազմելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. հունվարի 17-ի թիվ 30 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով, համաձայն՝ հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի կողմից 22.08.2022թ. տրված թիվ 112 և 113 դրական եզրակացությունների, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի ավագանու 19.04.2019թ թիվ 20–Ա և 22.10.2021թ. թիվ 58-Ա որոշումները, Անուշ Կարենի Կնյազանի կողմից լիազոր անձ՝ Վահան Ռշտունու և Մարգարիտա Սեյրանի Առաքելյանի դիմումները և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը Լոռի Բերդ համայնքի ավագանին՝

համայնքի ավագանին որոշում է.

1. ՀՀ Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղի վարչական սահմաններում գտնվող Անուշ Կարենի Կնյազյանի սեփականություն հանդիսացող 06-009-0122-0031 կադաստրային ծածկագրով 2.400314 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության հողամասը ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադրել բնակավայրի նպատակային նշանակության, խառը կառուցապատման հողեր գործառնական նշանակության:
2. ՀՀ Լոռի Բերդ համայնքի Ուռուտ գյուղի վարչական սահմաններում գտնվող Մարգարիտա Սեյրանի Առաքելյանի սեփականություն հանդիսացող 06-105-0018-0021 կադաստրային ծածկագրով 0.477 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման նպատակային նշանակության հողոմասը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 5

«ՈՒՌՈՒՏԻ ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ԻՆ ԳՈՒՅՔ
ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետերով և հիմք ընդունելով «Ուռուտի ԱԱՊԿ» ՀՈԱԿ-ի տնօրենի դիմումի հիման վրա Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

համայնքի ավագանին որոշում է.

1. «Ուռուտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ին նվիրել 66000 (վաթսունվեց հազար) դրամ արժողությամբ անվտանգության վահանակ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից: